

«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

ԹԵՄԱ

ԹԵՄԱ: ԹԵՄԱՏԻ ՏԵՄԱԿՆԵՐԸ

ԵՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ/ՄԱՅՐԵՆԻ

ՀԵՂԻՆԱԿ

ՄԻՐԱՆՈՒՇ ԴԱՆՂՅԱՆ

ՄԱՐԶ

ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ

ԱՆՎԱՆ N4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

## Բովանդակություն

1. Նախաբան.....	3 էջ
2. Հետազոտական համատեքստ.....	4 էջ
3. Գործնական համատեքստ.....	6 էջ
4. Հետազոտական ընթացք.....	10 էջ
5. Տվյալների մշակում և վերլուծություն.....	18 էջ
6. Ամփոփում.....	19 էջ
7. Գրականություն.....	20 էջ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողությունը ուսուցման գործընթացի կարևոր փուլերից է, յուրաքանչյուր աշխատանք ավելի արդյունավետ է լինում երբ պարբերաբար և ժամանակին կատարվում է վերահսկողություն:

Այդ նպատակով ընտրել են այս թեման և կատարել են հետազոտություն:

Կարծում են ցանկացած ուսումնադաստիարակչական գործընթաց արդյունավետ կլինի, եթե գիտելիքների որակի ստուգումնու գնահատումը կատարվի ճիշտ:

***Թեստը խնամքով ընտրված հարցերի շարք է, որը տրվում է աշակերտներին միավորներով գնահատելու կամ ուսուցումը խթանելու, արժևորելու նպատակով:***

Կրթական համակարգում թեստերն օգտագործվում են ընդունելության քննությունների, գիտելիքների ընթացիկ ստուգման, կիսամյակային ստուգումների, հեռաուսուցման և քննությունների անցկացման գործընթացում:

Թեստերի կազմման գործընթացում գոյություն ունեն ճանաչողական չորս մակարդակներ:

Առաջին մակարդակում տեղի են ունենում ինֆորմացիայի ընկալում, ծանոթացում առարկային, որի խնդիրն է օբյեկտների, երևույթների ճանաչումը:

Երկրորդ մակարդակում կատարվում է ոչ միայն ինֆորմացիայի ընկալումը, այլև նրա մեխանիկական արտապատկերումը, որի նպատակն է ստացված ինֆորմացիայի փոխանցումը, վերարտադրումը:

Երրորդ մակարդակում ինֆորմացիան ընկալվում, վերլուծվում, գիտակցվում է և դրա հիման վրա ընդունվում: Այս մակարդակի նպատակն ստացված գիտելիքների գործնական կիրառումը զանազան իրավիճակներում:

Չորրորդ մակարդակում ստացված գիտելիքները ոչ միայն կիրառվում են, այլև դրանց հիման վրա ստեղծվում են նորերը: Չորրորդ մակարդակի նպատակը նոր գիտելիքի ստեղծագործական վերարտադրումն է:

Թեստերի աճող կիրառումը միշտ չէ, որ ուղեկցվում է դրանց արդյունքներն օգտագործելու վերաբերյալ ճիշտ և հստակ պատկերացմամբ: Ուսուցիչները պետք է իմանան, թե թեստերն ինչ կարող են և ինչ չեն կարող հաղորդել սովորողի մասին: Նրանք պետք է իմանան, թե երեխաների մասին կայացրած որոշումները որքանով են արդարացի: Պարտադիր է իմանալ, թե ինչ է հնարավոր և ինչ հնարավոր չէ գնահատել թեստերի միջոցով, ինչպես են թեստերը կառուցված, որքանով են ճիշտ

կիրառվել: Լավ կազմված թեստը, ոչ միայն հնարավորություն է տալիս գնահատել աշխատանքը, այն նաև ստեղծություններ է հաղորդում, սովորեցնում: Թեստերն ուժեղ գործիքներ են այն դեպքում, երբ անհրաժեշտ է տարբեր պայմաններ ստեղծել(երբ ուժեղ երեխաներին թույլ է տրվում ավելի բարդ թեմաներ ուսումնասիրել):

Թեստերն ազդում են ուսուցման ամբողջ գործընթացի վրա: Այդպիսի ազդեցությունը կոչվում է հակադարձ ազդեցություն, որը կարող է լինել դրական և բացասական: Թեստերի դրական ազդեցությունն ուսուցման Վրա գլխավորապես պայմանավորված է ստուգվող նյութի ընտրությամբ: Եթե այն ընդգրկում է և արտացոլում է իրապես ուսուցանված և սովորողների կողմից ընկալված նյութերը, ապա թեստի ազդեցությունը համարվում է դրական, իսկ եթե թեստը բացասաբար է անդրադարձնում ուսուցման վրա, ապա ազդեցությունը բացասական է:

### **Գլուխ 1: ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ**

Մանկավարժական թեստերի ստեղծման ուղղությամբ կատարվում են բազմաթիվ հետազոտություններ, որոնք նպատակաուղղված են թեստավորման գործընթացի ավտոմատացմանը նրա ճշտության բարձրացման հարցերին:

***Թեստերը սովորողների գիտելիքներն ու հմտությունները ստուգելու և գնահատելու միջոց են, որոնք կիրառվում են ուսուցանված նյութի յուրացման և իմացության, ինչպես նաև որոշակի կարադրությունների ձևավորման սահմանը ստուգելու համար:***

Թեստ կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է: Առանց նպատակի թեստը հիմնականում վերածվում առաջադրանքների անհասկանալի մի համախմբի:

Ըստ նպատակադրման թեստերը կարող են լինել՝

1. *Առաջադիմության*, որոնք հանձնարարվում են նյութի ամփոփման ժամանակ յուրաքանչյուր կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին:
2. *Հայտորոշիչ* թեստեր, որոնք պարբերաբար տրվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու և հետագայում ուսուցման որակը բարելավելու նպատակով:
3. *Ուսուցողական* կամ ձևավորող թեստեր, որոնք օժանդակում են գիտելիքների ձեռքբերմանը, գործնական կիրառությանը, ընդհանրապես մտածողության զարգացմանը:
4. *Ընդհանուր* գիտելիքների, կարողությունների ստուգման թեստեր, որոնք ընդգրկում են ու բազմակողմանի, կարող են ներառել ուսումնական ծրագրերի մի քանի տարվա նյութ (նախատեսված է դպրոցի ավարտական և բուհական ընդունելության համար):

Ընդհանուր գիտելիքի ստուգման թեստը կազմվում է նախապես ստեղծված բնութագրիչների հիման վրա հատուկ ընտրված խմբի կողմից հետազոտությունների, ընտրություն կատարելու, վկայական տալու նպատակով, իսկ ընթացիկ գնահատման թեստը ուսուցիչների կամ կենտրոնի կողմից և միտված է դասավանդման որակի բարելավմանը:

Թեստերը պարունակում են վարժությունների և առաջադրանքների հետևյալ տեսակներ

- ա. բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ

բ. կարճ պատասխաններ պահանջող հարցադրումներ

գ. ստեղծագործական բնույթի կամ ընդարձակ պատասխան պահանջող հարցադրումներ

դ. համապատասխանեցման առաջադրանքներ

ե. բազմակի ընտրությամբ հարցեր(3,4 կամ տարբերակ, որից մեկն է ճիշտ):

Թեստային առաջադրանքները կարող են լինել հարցական, հաստատողական, տեքստային, աղյուսակային, գրաֆիկական և այլն: Թեստային առաջադրանքի ձևի ընտրությունը կախված է ուսումնական առարկայից, թեստի նշանակումից (գիտելիքի ընթացիկ ստուգման, հայտորոշիչ, ավարտական): Ըստ սովորողի կողմից կատարվող գործողությունների բովանդակության առաջադրանքները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. մեկ պատասխանի ընտրություն
2. մի քանի պատասխանի ընտրություն
3. երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատման
4. առաջարկվող տարրերի շարքում ճիշտ հերթականության հաստատման
5. առաջարկվող տարրերի նպատակային դասավորման
6. բացթողումների լրացման
7. տեղադրման
8. պատասխանը կազմելու
9. պատասխանը հաշվելու:

Մշակված թեստային առաջադրանքները պետք ապահովեն սովորողների գնահատման օբյեկտիվությունը հուսալիությունը: Թեստային առաջադրանքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները

ա.«առարկայական մաքրություն» (ուսումնական առարկաների չհատվելու պահանջը, առաջադրանքը պետք է պարունակի միայն տվյալ ուսումնական առարկային վերաբերող հարցեր),

բ. բովանդակության տրամաբանական ճշտություն,

գ.արդյունավետություն:

## **Գլուխ 2: ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ**

Թեստային առաջադրանքները գնահատվում են կոնկրետությամբ, ընդհանրացման խորությամբ և գիտելիքների լրիվությամբ: Առաջադրանքը պետք է լինի հասկանալի, միարժեք և հնարավորինս կարճ: Առանց փորձնական ստուգման առաջադրանքը չի կարող լինել թեստային: Առաջադրանքի դժվարությունը հիմնականում կախված է նրա բովանդակությունից և ձևից: Առաջադրանքի բարդությունը կարելի որոշել սխալ պատասխանների մասով (սխալ պատասխանների հարաբերությունը պատասխանների ընդհանուր թվին):

Թեստային առաջադրանքներում կարող են լինել տարբեր քանակությամբ և հարաբերությամբ ճիշտ և սխալ պատասխաններ: Խորհուրդ չի տրվում բերել բացահայտ ոչ ճիշտ պատասխաններ, որոնք սովորողը միանգամից կճանաչի: Պատասխանների ոչ ճիշտ տարբերակները պետք է լինեն ճշմարտանման: Լավագույն է համարվում մեկ տող զբաղեցնող կարճ պատասխանը: Առաջադրանքում բառերի տողադարձ խորհուրդ չի տրվում (դա դժվարեցնում է կարդալը): Թեստային առաջադրանքներին ներկայացնող պահանջներից մեկը պատասխանի համար

անհրաժեշտ ինֆորմացիայի նվազագույն ծավալն է առանց իմաստի կորստի: Ավելորդ մանրամասնումը, ավելորդ բառերը, նիշերը սովորողի ուշադրությունը շեղում են հիմնական ընկալումից: Տեքստի տարրերի վատ, դասավորությունը, անխնամ պատկերազարդումը, համընդհանուր ճանաչում չունեցող հապավումների օգտագործումը դժվարեցնում են ինֆորմացիայի ընկալումը: Թեստային առաջադրանքների բովանդակությունը պետք է համապատասխանի սովորած նյութերին, դասագրքին:

*Թեստեր մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնական նյութի բովանդակության ընտրության հետևյալ սկզբունքները.*

1. գիտելիքների առավել կարևոր, հիմնական տարրերի ընտրություն
2. գիտական արժանահավատությունը (խորհուրդ չի տրվում թեստի մեջ մտցնել վիճելի տեսակետներ)
3. բովանդակության լրիվությունը և ստուգման համար բավարար լինելը
4. թեստի բովանդակության փոփոխման հնարավորությունը կապված ուսումնական առարկայի բովանդակության փոփոխման հետ
5. աճող դժվարությունը (թեթև առաջադրանքներից, որոնք ճիշտ կատարում է սովորողների մեծ մասը, մինչև ամենադժվարները:

Հայտնի է, որ անհնարին է միևնույն թեստով ճիշտ որոշել տարբեր պատրաստվածության աստիճան ունեցող սովորողների գիտելիքները: Դրա համար էլ հաճախ թեստերը մշակվում են պատրաստվածության միջին մակարդակ ունեցող սովորողների գիտելիքները ստուգելու համար: Թեստ կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ:

*Թեստը պետք է չլինի հուսալի, որը նշանակում է ստուգման և գնահատման հաստատունություն:*

Թեստը համարվում է հուսալի, եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերին նույն խմբին ստուգելու դեպքում: Թեստի հուսալիության հետ կապված քննարկվում են երկու հիմնական մեթոդաբանական խնդիրներ ժամանակը և բովանդակությունը: Յուրաքանչյուր թեստին կից պետք է մշակվեն գնահատման չափանիշներ, որտեղ ներկայացվում են ստուգման կամ ուսումնասիրման համար անհրաժեշտ որակներն ու հարակից պահանջները, որոնք պետք է դրսևորի առաջադրանքները կատարող աշակերտը: Թեստի արդյունքներ ավելի հուսալի են, եթե այն նախատեսվում է ավելի քիչ ուսումնական որակներ ստուգելու համար: Լավագույն թեստը միայն մեկ նպատակի համար նախատեսվել է:

*Թեստը պետք է լինի հավաստի, այսինքն ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է:* Հավաստիությունն այն ցուցիչն է, երբ փաստերի ու տեսության միջոցով, կարելի է մեկնաբանել թեստի գնահատականները նախատեսված նպատակով այն օգտագործելու տեսանկյունից: Կարևոր է, որ առաջադրանքը ծանոթ լինի սովորողներին, իսկ գնահատականը ճշգրիտ արտահայտի սովորողի իմացության աստիճանը: Թեստի հավաստիությունը նպատակին ծառայելն է: Հավաստիությունը թեստի արժևորման և կատարելագործման հիմնարար բնութագրիչն է, որով արժևորվում և որակապես բարելավվում է, թեստը: Թեստի կրթակարգային կամ չափորոշչային հավաստիությունը պայմանավորված է, թե որքանով են չափորոշչային պահանջներն արտահայտված գնահատման մեջ առաջադրանքների միջոցով:

*Թեստը պետք է չլինի իրագործելի թե մարդկային ռեսուրսների, թե ժամանակի առումով:*

***Թեստը պետք է լինի արդյունավետ, որը նշանակում է նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով ապահովել առավելագույն արդյունք:***

Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որը ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը ամփոփ ներկայացված որպես ծրագրային պարտադիր միջուկ: Թեստի արդյունավետությունը կարելի է որոշել նաև համադրելով թեստի դժվարության աստիճանը սովորողի պատրաստվածության մակարդակի հետ: Թեստն արդյունավետ է, եթե բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների պատրաստվածության մակարդակին: Համապատասխանել նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող ուսուցողի համար թեստը պետք է լինի ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար:

Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է կատարել կազմված թեստերի և առաջադրանքների փորձարկումներ, որոնց արդյունքում թեստերը բարելավվում են: Թեստը կիրառելուց առաջ օգտակար կլինի դրա գնումը հոգեբանական տեսանկյունից հաշվի առնելով սովորողի տարիքային առանձնահատկությունները:

Թեստի արդյունքների գնահատումն աշակերտի համար ավելի օգտակար հետհանքներ կունենա, եթե նրան հայտնի լինի, թե ինչ սկզբունքներով և ինչպես է ուսուցիչը գնահատելու իր աշխատանքը: Այդ խնդրի լուծման լավ ձևերից է գնահատման սանդղակը: Մանդղակը, որպես գնահատման չափանիշ, իրենից ներկայացնում է միավորների աղյուսակ և դրա յուրաքանչյուր միավորը բնութագրող հատկանիշներ: Գնահատման սանդղակները լավ մշակված ցուցիչներ են, որոնք սահմանում են գիտելիքների, կարողությունների, հմտությունների և աշխատանքի արդյունքի ամրագրման հստակ չափանիշներ:

Սովորողի ձեռքբերումները գնահատող միավորների սանդղակում նկարագրված չափորոշիչների միջոցով կարելի է դատել աշակերտի ա.տվյալ թեմային վերաբերող գաղափարների, սահմանումների, փաստերի իմացության, և դրանց համադրման ու կիրառման կարողության մասին բ.որոշակի առաջադրանքների կատարման համար գիտելիքների միջնորդավորված օգտագործման և ստեղծագործական մտածողության անհրաժեշտ հմտություններ ցուցաբերելու վերաբերյալ:

Գնահատման սանդղակները կարող են լինել ընդհանուր կամ որոշակի թեմայի համար: Ընդհանուր սանդղակը կարելի է որոշակիացնել յուրաքանչյուր առարկայի դասի, թեմատիկ աշխատանքի կամ առաջադրված այլ նպատակի համար: Որոշակիացված սանդղակները վերաբերում են որևէ ուսումնական նյութի յուրացումն ստուգելու նպատակով կազմված թեստին կամ առաջադրանքին: Կախված առաջադրանքի կամ թեստի առանձնահատկություններից կարող են կազմվել որոշակիության տարբեր աստիճաններ բնութագրող թեստեր:

Թեստաբանության պարտադիր պահանջների մեջ են մտնում.

1. թեստի արդյունքների գրանցման կարգը
2. թեստի արդյունքների և դրանում ընդգրկված առաջադրանքների վերլուծությունը
3. թեստի միավորների մեկնաբանությունները
4. ուսուցանող նպատակով տրված թեստի արդյունքների վերլուծությունը և մեկնաբանությունները
5. եզրակացությունները:

**Գլուխ 3: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ**

**Հայտորոշիչ թեստ:** Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է ընթացիկ վիճակի ճիշտ հայտորոշմամբ: Հայտորոշման դերը բարձր է ուսումնական աշխատանքում, եթե որակյալ արդյունք է ակնկալվում: Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրմաննպատակն է պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Կախված այն բանից, թե ինչը ինչ ծավալով և խորությամբ է անհրաժեշտ հայտորոշել, կարելի է օգտագործել տարբեր միջոցներ:

Ճիշտ հայտորոշումն այն կարևոր նախապայմանն է, որով հնարավոր է գտնել աշակերտի թերությունները վերացնելու միջոցներ և ընտրել ուսուցման արդյունավետ մեթոդներ: Հայտորոշիչ ստուգման ձև կարող է լինել նոր դասը բացատրելուց անմիջապես հետո դրա յուրացման աստիճանի ստուգելը:

Ուսուցանող գնահատման առանձնահատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը, որի նպատակն է որոշել, թե արդյոք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը:

Հայտորոշիչ թեստերը կարող են լինել ընդհանուր և մասնավոր բնույթի: Առաջինի դեպքում ավելի ընդհանուր խնդրի բացահայտումն է. օրինակ ուսումնական տարեսկզբին հայտորոշման նպատակով տրվում է ծավալուն մուտքային գրավոր աշխատանք, որի նպատակն է պարզել աշակերտների փաստացի գիտելիքները, կարողությունները ու պատրաստվածության ընդհանուր մակարդակը և պլանավորել հետագա աշխատանքները:

**Ընդհանուր բնույթի հայտորոշիչ թեստի նմուշ օրինակ մաթեմատիկա առարկայից:**  
4-րդ դասարան

**1. Լրացրո՛ւ նախադասությունները:**

*Յուրաքանչյուր կարգային գումարելի ցույց է տալիս, թե տվյալ կարգում քանի\_\_\_\_\_:*

**2. Լրացրո՛ւ աղյուսակը:**

Հազարյակների դաս			Միավորների դաս			Թիվը
Հարյուր-հազարյակ	տաս-հազարյակ	հազարյակ	Հարյուրյակ	Տասնյակ	Միավոր	
						325018
		1	3	0	1	
						16403
7	2	0	8	0	6	

**3. Գրի՛ր այն թիվը, որը կազմված է 7 տասնհազարյակից, 4 հազարավորից և 5 տասնյակից:**

\_\_\_\_\_





յուրացման կամ որոշակի հմտությունների և կարողությունների ցածր մակարդակի: Կարճ ժամանակի համար նախատեսվող թեստերն ավելի ճկուն են և դրա արդյունքներն ավելի օբյեկտիվ, հուսալի և արդար են վերլուծությունների, համար:Նման թեստերում ընդգրկվող առաջադրանքները հիմնականում լինում են հետևյալ տեսակների

- ա) ընտրովի պատասխանով
- բ) կարճ պատասխանով
- գ) համապատասխանեցման
- դ) բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ

**Կարճ ժամանակի համար տրվող հայտորոշիչ թեստի նմուշ օրինակ մաթեմատիկա առարկայից**

4-րդ դասարան

Թեման. Բազմանիշ թվերի գումարումն ու հանումը

1. Գրի՛ր սյունակով և հաշվի՛ր.  
4459-3569                      5741-3214  
2987+4897                      8228-6556
2. Հաշվի՛ր արտահայտության արժեքը  
 $564 + (900 - 500) : 2$                        $600 - (180 : 2)$
3. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը.  
Միջոցառմանը մասնակցում էր 91 մարդ: Նրանցից 48-ը երեխաներ էին: Քանի՞ մեծահասակ էր մասնակցել միջոցառմանը:  
ա) 44, բ) 43, գ) 47
4. Ընգծի՛ր ճիշտ պատասխանը.  
Եռանկյան կողմերի երկարություններն են 18սմ, 7սմ, 16սմ: Հաշվի՛ր այդ եռանկյան պարագիծը:  
ա) 44, բ) 41 գ) 42

Մայրենիի հայտորոշիչ թեստերը կազմված են 3 մասից աշակերտական տարբեր խմբերի կողմից գործածության նկատառումով: Թեստերում առաջադրանքների հաջորդական համարակալումը աշակերտին հնարավորություն է տալիս չսահմանափակվելու որոշակի մասում ներկայացված առաջադրանքների շրջանակում, այլ փորձելու իր ուժերը ավելին կատարելու, իր հնարավորությունների սահմաններում բոլոր հարցերին պատասխանելու նպատակադրումով:

Թեստերում ընդգրկված առաջին մասի հարցերը պահանջում են կարդացածի բովանդակության ընկալման և լեզվական գիտելիքներ դրսևորելու կարողություններ, որը վերաբերում է չափորոշչային պահանջների առաջին մակարդակին: Երկրորդ մասում ընդգրկված առաջադրանքներն բնույթով ավելի բարդ են, քանի որ պահանջում են գործնականում կիրառել ստացած լեզվական գիտելիքը: Երրորդ մասի առաջադրանքները ստեղծագործական բնույթի են, որոնք առաջարկում են կարդացածի թեմային համապատասխան մի քանի նախադասությամբ ինքնուրույն կապակցված խոսք կազմել:

Առաջադրանքների ընտրությունը կատարում է աշակերտը. Դա ևս մի միջոց է տեղեկանալու, թե որ բնույթի աշխատանքներն են աշակերտին ավելի դյուրին, ինչ բնույթի հարցեր է ինքը նախընտրում, և որ հարցերն են դժվարություն ներկայացնում: Ուսուցիչը ճիշտ հայտորոշելու դեպքում հնարավորություն է ստանում յուրաքանչյուր աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու և օգնելու նրան առավել կարճ ժամանակահատվածում հաղթահարելու ուսման մեջ հանդիպող դժվարությունները:



լավ օրոք \_\_\_\_\_

5. **Գրի՛ր մեկ բառով:** (4 միավոր)

հինգ թև ունեցող – \_\_\_\_\_  
երեք գլուխ ունեցող – \_\_\_\_\_  
թույլ տալ – \_\_\_\_\_  
հինգ նշից կազմված - \_\_\_\_\_

6. **V-ով նշիր միայն դարձվածքները:** (2 միավոր)

ականջին օղ անել    լեզուն կապ ընկնել    թռչնի թև  
գլխի ընկնել    մեծ ականջ    սիրտ առնել  
կարմիր սիրտ    օտար լեզու

**2-րդ մաս**

**Գրի՛ր պատասխանը:**

7. **Վերնագրի՛ր** տեքստը:

8. Արտագրի՛ր նախադասությունները ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան հականիշներով:

Լեռան գագաթին մի գեղեցիկ տնակ կար:

Առավոտյան վախկոտ զինվորները նահանջեցին:

9. Տեքստից դո՛ւրս գրիր ինչպիսին էր լորենին:Գրի՛ր այդ բառի հոմանիշները (նվազագույնը՝ 2)

**3 - րդ մաս**

**Շարադրի՛ր պատասխանը:**

10. **Ավարտի՛ր նախադասությունը:**

Մեղրից օգտվելն ավելի հարմար եղավ, երբ \_\_\_\_\_

**11. Հորինի՛ր և 4-5 նախադասությամբ գրիր ինչ արեց արջուկը, երբ որսորդները հեռացան:**

---

---

Քանի որ հայտորոշիչ թեստը տրվում է աշակերտին հետադարձ կապի հաստատման նպատակով, ուստի գրավոր կամ բանավոր արժևորման ժամանակ կարևորվում են ուսուցչի հետևությունները, մեկնաբանությունները: Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը: Վերլուծումներն ու մեկնաբանությունները պետք է այնպես արվեն, որ օգնեն աշակերտին բարելավելու իր արդյունքները:

Հայտորոշիչ թեստն ստուգելիս կարելի է օգտագործել միավորային գնահատականներ արդյունքների հեշտ և ակնառու վերլուծությունների ու մեկնաբանությունների նպատակով:

*Հայտորոշիչ թեստի օրինակ՝ «Ես և շրջակա աշխարհը-4» առարկայից:  
Թե՛մա՝ «Ջարմանահրաշ ջուրը»*

1. Նշի՛ր ջրի հատկությունները. / 4 միավոր /

- Անհամ
- Գունեղ
- Անհոտ
- Զուլյալ
- Վճիտ
- Թափանցիկ
- Լուծիչ

**1. Առանձնացրու ջրի ագրեգատային վիճակները.** /3 միավոր /

- Պինդ
- Թափանցիկ
- Անհոտ
- Հեղուկ
- Լուծիչ
- Գազային

2. Ո՞ր երևույթներն են նկարագրում ջրի պինդ վիճակը . /3 միավոր /

- Մառույց
- Մառախուղ
- Անձրև
- Կարկուտ
- Գոլորշի
- Ձյուն

## ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միավորները սահմանվում է ելնելով տվյալ հարցում ընդգրկված ճիշտ պատասխանների քանակից:

*Հստոտրոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններն են.*

1. կարճ ժամանակի համար է նախատեսված,
2. ստուգում է մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն,
3. բոլոր առաջադրանքները ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
4. առաջադրանքների տեսակները բխում են տվյալ թեմայի ուսուցման նպատակից,
5. հարցերը ձևակերպված են կարճ, պարզ և մատչելի,
6. առաջադրանքների բարդության աստիճանը այնպիսին է, որ սովորողների մեծ մասի կողմից այն հաղթահարելի է,
7. թեստի կատարման տևողությունը կարճ է 10- 15 րոպե,
8. արդյունքները արագ են ստուգվում և արժևորվում,
9. արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով կարող ենք որոշել աշակերտների հետ հետագա անելիքները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### ԽՆԴԻՐ

Ուսումնառության պարտադիր մակարդակը վերահսկելու և ստուգելու համար, որպես հիմնական և օբյեկտիվ չափանիշ օգտագործում ենք թեստեր:

Թեստ անցվերենից թարգմանաբար նշանակում է փորձարկում, փորձ, հետազոտություն: Թեստը առաջադրանքների համախումբ է, որի արդյունքներով կարելի է դատել աշակերտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների մասին և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը:

Թեստը ավանդական ստուգման տեսակների համեմատությամբ ունի հետևյալ առավելությունները.

1. այն ավելի օբյեկտիվ է
2. թեստի գնահատականը ավելի տարբերակված է
3. թեստն ունի բարձր արդյունավետություն, այն ընդգրկում է ավելի մեծ ծավալով ծրագրային նյութ
4. թեստը համարյա ստուգման ավարտական փուլ է:

Կիրառելով ուսուցանող և միավորողին գնահատման թեստեր եկել են այն եզրակացության, որ թեստերը օգնում են մշտական հետևողություն դրսևորել յուրաքանչյուր աշակերտի առաջընթացի կամ դժվարությունների հարցերում, հնարավորություն են տալիս ժամանակին շտկողական աշխատանքներ վարելու: Թեստերի կիրառումը հնարավորություն է տալիս.

1. ճշգրտելու յուրաքանչյուր սովորողի հետ տարվող աշխատանքի բովանդակությունն ու ծավալը, խթանելու նրա ուսումնական ակտիվությունը,
2. հայտորոշելու ուսուցման ընթացքն ու արդյունքները,

3. շաղկապելու ուսուցումն ուսումնառության հետ
4. ապահովելու փոխադարձ կապ սովորողի, նրա ծնողի հետ
5. վերհսկելու ուսումնական գործընթացն ու արդյունքները
6. աշխատանքներն արագ ստուգելու և արժևորելու արդյունքները

### ***Նպատակ***

*Այսպիսով*, թեստերի կիրառումը բարձրացնում է գիտելիքների գնահատման գործընթացի արդյունավետությունը, բացահայտում է բացթողումները և խրախուսում ուսուցումը, ինչպես նաև ապահովում հետադարձ կապ ուսուցման որակի հետ:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ:

1. Մ.Վարդումյան, Ն.Ջաղիւնյան, Լ. Հարությունյան, Գ. Վարելլա «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում» /Նոյան տապան Երևան 2005/
2. Օ.Ս. Միքայելյան «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան: Ուսուցչի ձեռնարկ» /ՀՀ Կրթության ազգային ինստիտուտ, 2010/
3. Մ.Ջ. Հակոբյան, Ա.Գ. Կիրակոսյան, Վ.Ա. Մանուկյան «Թեստերի մշակման կարևոր բաղադրիչները և դրանց ներկայացվող պահանջները:» 2014
4. Մ. Սարգսյան «Ուսուցանող գնահատում: Մաթեմատիկա 1-4 դասարաններ» /Հրազդան 2012/
5. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան «Հայտորոշիչ թեստ: Մայրենի 3-րդ դասարան» /Զանգակ 2016/

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Ն ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ (ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ և ՀԵԱԱԶՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ) ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

#### Մայրենի

##### 1. Շերտավորում

1. Иванов М Г. Дифференцированное обучение младших школьников, Начальная школа, №11, 1994 г.
2. Рогановский Н. Дифференцированное обучение (в школе) - как его осуществить? // Народное образование-1991 - №3 - с.79-81.
3. Яковлева Е.В. Организация дифференцированного подхода в процессе усвоения знаний младшими школьниками, ж. Начальная школа №5 2004г., стр.69

##### 2. Դասի պլանավորում

Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, Չանգակե հրատարակչություն, 2014 թ.

Կ. Թորոսյան, Մ. Բալայան, Կ. Չիբուխյան, Մադրենիի դասերի պլանավորումը, Չանգակե հրատարակչություն, 2016թ.

Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, Չանգակե հրատարակչություն, Երևան, 2011թ.

Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, Չանգակե հրատարակչություն, 2013թ.

##### 3. Տեքստի շուրջ տարվող աշխատանքները

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, Չանգակե հրատարակչություն, 2014 թ.

2. Կ. Թորոսյան, Մ. Բալայան, Կ. Չիբուխյան, Մայրենիի դասերի պլանավորումը, Չանգակե հրատարակչություն, 2016թ.

3. Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, Չանգակե հրատարակչություն, Երևան, 2011թ.

4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, Չանգակե հրատարակչություն, 2013թ.

5. Կ. Թորոսյան, Կ. Չիրուխյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս II, .Զանգակե հրատարակչություն, 2013թ.
6. Զ. Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Լույսե հրատ., Երևան, 1998թ.
7. Զ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Զանգակե հրատ., Երևան, 2015թ.

#### **«Ես և շրջակա աշխարհը» առարկան**

1. Ես և շրջակա աշխարհը ուսումնական առարկայի չափորոշիչն ծրագիր (1-4-րդ դասարաններ)
2. Թորոսյան, Կ. Չիրուխյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս II, .Զանգակե հրատարակչություն, 2013թ.
3. Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Ս. Վարդումյան, Ի. Օհանով, Մ. Պետրոսյան,  
Ինտեգրացված թեմատիկ միավորներ, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ.

#### **Տեխնոլոգիա**

1. Տեխնոլոգիան առարկայի ծրագիր, չափորոշիչ, Երևան- 2010թ.
2. Աշխատանքային տետր 1-ին դասարանի համար, /հեղ.Ս.Հովսեփյան և ուրիշներ/, Երևան, Տիգրան Միծ, 2015թ.
3. Դասագրքեր 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններ համար, /հեղ. Մծովսեփյան և ուրիշներ/, Երևան, Տիգրան Մեծ, 2015թ.
4. Ուսուցչի ձեռնարկ 1-4 դասարաններ համար, /հեղ. Ս. Հովսեփյան և ուրիշներ, Երևան, Տիգրան Մեծ, 2015թ.
5. Մեթոդական ձեռնարկ 1-4 դասարաններ համար, /հեղ. Ժ. Ավետիսյան/ Երևան, ԱՍՏՂԻԿ գրատուն 2009թ.

#### **Դաստիարակություն**

1. Ղևոնդ Ալիշան, Հայ դասականների գրադարան. Երկեր, .Ազգային հատուկ դաստիարակությունն, .Սովետական գրող հր. Երևան 1981թ., էջ 156
2. Ա.Թովուրյան. Դաստիարակության հայեցակարգ (նախագիծ), Մանկավարժություն, 2008թ., հ. 7,8, էջ 4:
3. Մերգեյ Մանուկյան Մանկավարժություն 2009 համար 7-8, էջ 54:
4. Վիկտոր Մարտիրոսյան, Մելանյա Դավթյան, Դաստիարակության հիմնախնդիրներ, Մանկավարժություն, 2004թ., հ. 4, էջ 4:
5. Մելանյա Դավթյան, Աշակերտական խորհուրդների դերը սովորողների դաստիարակության խնդրում, Մարդ և հասարակություն, 2010թ., հ. 5, էջ 3:
6. Моисеев, Н.Н. Система Учительской современная экологическая обстановка // Экология и жизнь . -2010. -№ 2.-С. 4-7.
7. Մարգիս Գալոյան, Մենք և մեր դաստիարակությունը, Մանկավարժություն, 2015թ., հ.2, էջ 37:
8. Քաղաքացիական կրթություն.  
Ուսուցման բովանդակությունը և կատարման մեթոդները. Նատալյա Վոսկրեսենսկայայի և Սթիվեն Շերտերի խմբագրությամբ, Երևան 2009թ.

#### **Մանկավարժություն**



Կ.Թորոսյանն, Կ. Չիրուխյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս II, .Զանգակե հրատարակչություն, 2013թ.Կ.

### **Հոգեբանություն**

Ա. Ալեքսանյան, Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Անտարես, Երևան, 2011թ.

### **Գնահատում**

1. Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ.Միքայելյան: .Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթանելուսուցչիձեռնարկ: Երևան 2010: Էլեկտրոնային տարբերակը տեղադրված է գտնե Կրթությանազգային ինստիտուտի կայքում[www.aniedu.am](http://www.aniedu.am)- Հանրակրթություն - Գնահատում բաժնում:
2. Օնիկ Միքայելյան, Սոնա Միքայելյան: Թեստ. Կառուցման և արդյունքների վերլուծության հիմունքների ձեռնարկ: Երևան 2015, .Զանգակե հրատարակչություն:
3. Միրամարգ Վարդումյան, Նինա Ջաղինյան, Լիլիթ Հարությունյան, Գարի Վարելյա: .Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատման ձեռնարկ: Երևան 2005, .Նոյան Տապան հրատարակչություն:
4. Լեզուների իմացության /իրագրելության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Երևան 2005, Նորք -գրատուն:
5. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյանն ուրիշներ: .Համագործակցողին ուսուցման ձեռնարկ: Երևան 2006, .Անտարես հրատարակչություն: Գնահատումը՝ տես էջ. 79-89:
6. Օգտվել համապատասխան ուսումնական առարկայի համար ստեղծված գնահատման ձեռնարկներից ևԿԱԻ-ի կայքում տեղակայված նյութերից:

### **Ներառական կրթություն**

1. Մտավոր և խնդիրներ ունեցող սովորողների հետ աշխատող հատուկ մանկավարժի ուղեցույց .ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2008թ.:
2. Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթությանպետական չավփորոշիչ, Երևան, 2006թ.:
3. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետականչավփորոշիչ, Երևան, 2006թ.:
4. Հատուկ կրթության գիտամեթոդական տեղեկատու, Երևան, 2010թ.:
5. Բժշկամեթոդական գնահատման կենտրոնի տեղեկատու, Երևան, 2010թ.:

### **Մաթեմատիկա**

1. Ս. Սարգսյան, Սովորողների մաթեմատիկական հետաքրքրությունների և տրամաբանական մտածողության զարգացումը առաջադրանքների միջոցով: Մաթեմատիկական դպրոցում, 2014, № 2
2. Ս. Սարգսյան, Հետաքրքրաշարժ առաջադրանքներ մաթեմատիկայից: Երևան, .Արևիկ հրատարակչություն, 2012
3. Ս. Սարգսյան, Յուրորինակ առաջադրանքներ մաթեմատիկայից: Երևան, .Զանգակե հրատարակչություն, 2013:
4. Винокурова Н. К. Развиваем способности детей: М.: Росмэн-Пресс, 2002.

5. Забрамная С. Д., Костенкова Ю. А. Развивающие занятия с детьми: Материалы для самостоятельной работы студентов по курсу .Психолого-педагогическая диагностика и консультирование- М.: В. Секачѳв, 2001. - 80
6. Лавриненко Т. А. Как научить детей решать задачи: Методические рекомендации для учителей начальных классов. - Саратов: Лицей, 2000. - 64 с.
7. Тихомирова Л. Ф. Упражнения на каждый день: Логика для младших школьников: Популярное пособие для родителей и педагогов. - Ярославль: Академия развития, 2001.
8. Зак А. З. Как развивать мышление у детей ...